ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2011 թ. դեկտեմբերի 14-ին, թիվ 129 - Ա

ք. Աշտարակ

ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2002 թվականի հուլիսի 25-ի <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայության առաջատար թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ, ինչպես նաև առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորումն անցկացնող մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը հաստատելու մասին>> թիվ 7 որոշմամբ հաստատված 2-րդ հավելվածի 9-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի 2011 թվականի դեկտեմբերի 15-ին կրտսեր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորում անցկացնող ատեստավորման հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2011թ. դեկտեմբերի 14-ի թիվ 129-Ա որոշման

ԿԱԶՄ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կրտսեր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների 2011 թվականի դեկտեմբերի 15-ին ատեստավորում անցկացնող ատեստավորման հանձնաժողովի

1.Միքայել Եղիազարյան - Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի վերահսկողության և վերլուծության վարչության գլխավոր մասնագետ, հանձնաժողովի նախագահ

2.Կարեն Բարսեղյան - Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի վերահսկողության և վերլուծության վարչության գլխավոր մասնագետ, հանձնաժողովի քարտուղար

3.Արայիկ Դարբինյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի գլխավոր մասնագետ

4.Սասուն Ադամյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի Աշտարակի սոցիալական ծառայության տարածքային գործակալության պետ

5. Գոհար Բոցինյան - Աշտարակի թիվ 2 հիմնական դպրոցի ուսուցչուհի

6. Անժելա Իսպիրյան -Աշտարակի թիվ 1 հիմնական դպրոցի ուսուցչուհի

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար՝ Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ